— Բոլորովին ճիշտ է, — ընդմիջեց Ասլանը, որ լուռ լսում էր: — Բարձր քաջութիւնը անձնազոհութիւն է պահանջում, իսկ անձնազոհութիւնը առանց բարձր իդէալների չէ կարող լինել:

Նա դարձեալ լռեց եւ կարծես այլեւս չէր լսում մեզ: Ես հարցրի.

— Ուրեմն ձեզնից վախենո՞ւմ են:

— Ասած է՝ «թուրքին ծեծիր, հետը բարեկամացի՛ր», — պատասխանեց Արթինը: — Ախար այդ առածը խօ այսօր չէ կազմոել. դա հարիւրաւոր, գուցէ հազարաւոր տարիների փորձերի վերջին խօսքն է: Եւ ես ինքս փորձել եմ այդ: Այդ գառան խորոված, որ հիմա կերանք, գիտէ՞ք ով էր ուղարկել, մի քուրդ աւազակապետ, որի ոչխարները արածում են մեզանից փոքր-ինչ հեռու ձորի մէջ: Իմանալով, որ իմ քարաւանը իջեւանել է իր չադրաների մերձակայքում, իր որդու ձեռքով ուղարկել էր երկու գառ եւ պատուիրել էր հարցնել իմ առողջութիւնը:

— Իսկ դուք գառների փոխարէն ի՞նչ ուղարկեցիք նրան:

— Իմ ողջոյնը եւ մի թօփ Շամի ալաջայ նրա կանանց հագուստի համար:

— Երեւի այդ քուրդը մի ժամանակ գործ է ունեցել ձեզ հետ:

— Այո՛, մի անգամ սաստիկ ջարդոեցաւ, եւ այնուհետեւ բարեկամացանք: — Ինձ ներեցէք, — ասաց նա վեր կենալով, — ես երկար նստեցի եւ շատ խօսեցի: Ես պէտք է տեսնեմ, թէ ի՞նչ են շինում տղերքը, իսկ դուք կարող էք այստեղ հանգստանալ: Ձեզ համար ամէն ինչ պատրաստել են:

— Առաւօտեան հարկաւոր են երկու լաւ ձիաւորներ, — ասաց Ասլանը: — Ես պէտք է քարաւանից առաջ ընկնեմ, մի քանի տեղեր տեսնելու համար:

— Ես կը տամ քեզ իմ մարդիկներից երկու այնպիսի ձիաւորներ, որոնց մէկը հարիւրի պատասխան կը տայ, — խոստացաւ նա եւ, բարի գիշեր ասելով, հեռացաւ:

Ասլանը այս գիշեր սովորականից վաղ քնեց. Վանի մէջ կատարած ծանր աշխատութիւններից յետոյ այդ առաջին գիշերն էր, որ նա հանգստանում էր: Տէր աստուած, ի՞նչ էր նրա դրութիւնը, մի տենդային դրութիւն, մի սաստիկ լարուած մեքենայի դրութիւն, որ հանգիստ եւ դադարում չունի:

Ես դեռ պառկած էի իմ անկողնի մէջ, քունս չէր տանում. իմ աչքերի առջեւ դեռ նկարուած էր Թոխմախ-արթինի թաւամազ դէմքը իր մռայլ կերպարանքով եւ սեւ, վառվռուն աչքերով: Այդ մարդը պարծենկոտ չէր. ինչ որ խօսում էր նա, ինչ որ պատմում էր, բոլորը ճշմարիտ էր: Նա, իրաւ, քաջ